ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9բ դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Վարդիթեր Սարգսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Տարեկան գնահատականների և ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
2. Ծնողական և աշակերտական խորհուրդների նախագահների հաշվետվություն:

1.Լսեցին. Տարեկան գնահատականների և ավարտական քննությունների արդյունքների ամփոփման հարցը:

Դասղեկ Վարդիթեր Սարգսյանի ելույթը: Նա նշեց, որ 2017-2018 ուստարվա ընթացքում 9բ դասարանում աշակերտների թվի փոփոխություն չի եղել: Տարեսկզբում եղել են 24 աշակերտ, և 24-ն էլ ավարտել են 9-րդ դասարանը: Տարեկան գնահատականներով դասարանի ուսման առաջադիմությունը կազմում է 100 %: Կան 4 գերազանցիկ (Բաղալյան Ելենա, Մկրտչյան Աննա,Ներսիսյան Երանուհի,Սարգսյան Էդմոնդ) և 6 հարվածային (Ադամյան Վարդան, Գրիգորյան Մերի,Անտոնյան Աստղիկ,Պետրոսյան Լուսինե, Ոսկանյան ՄելինեՆավասարդյան Լիա) աշակերտներ:

Ժողովի ընթացքում մանրամասնորեն ներկայացվեցին յուրաքանչյուր աշակերտի տարեկան գնահատականների ամփոփագիրը և բացակայությունը: Ամփոփիչ ձևով տեղեկացվեցին նաև քննությունների արդյունքները: Դրվատանքի ու գովեստի խոսքեր ասվեցին քննություններին լավ նախապատրաստված աշակերտների հասցեին, որոնք պատասխանատվության զգացումով հանձնեցին ավարտական բոլոր քննությունները:

Ե՛վ գրավոր, և՛ բանավոր քննություններն սկսվեցին ու ավարտվեցին ժամանակին, և դասարանի բոլոր աշակերտները փոխադրվեցին 10-րդ դասարան:

Քննություններից հետո առանց կորուստների և մաքուր վիճակով հավաքագրեցին ու հանձնեցին բոլոր դասագրքերը:

Դրական գնահատվեց նաև ավագներ Ելենա Բաղալյանի և Վարդան Ադամյանի աշխատանքը: Նրանք մեծ պատասխանատվությամբ են կատարել իրենց վրա դրված պարտականությունները՝ հետևելով դասարանի մաքրության, հերթապահության կատարման, գույքի, դասագրքերի և օրագրերի պահպանման, հաճախումների հաշվառման և այլ աշխատանքներին: Չնայած դրան,ունեք որոշ գույքի վերանորոգման խնդիր:

Նշվեցին նաև ուստարվա ընթացքում դասարանում կատարված բոլոր միջոցառումները՝ սպորտլանդիաներ, Ուսուցչի տոն, Գիրք նվիրելու և Մայրենիի տոն, «Մեր մեծերը» շարքից՝ Հակոբ Պարոնյան, Մայիսի 9-ի տոնակատարություն և այլն: Այցելել են Հայաստանի պետական պատկերասրահ, դիտել ցուցահանդեսներ, կինոնկարներ և թատերական ներկայացումներ: Դասարանի աշակերտները մասնակցել են ինչպես դպրոցական, այնպես էլ տարածաշրջանային ու մարզային մրցույթ-օլիմպիադաների և արժանացել պատվոգրերի ու մրցանակների:

«Դատեկի ժամ»-երի ընթացքում լսվել են զրույց-զեկուցումներ, քննարկվել բազմաթիվ բազմաթիվ հարցեր, որոնք նպաստել են ուսման առաջադիմության և աշակերտների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը:

Որոշեցին

Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած տարեկան գնահատականների ու ավարտական քննությունների ամփոփիչ արդյունքները, 2017-2018 ուստարում կատարված աշխատանքները, շնորհավորել աշակերտներին՝ 10-րդ դասարան փոխադրվելու կապակցությամբ:

2.Լսեցին.- Ծնողական և աշակերտական խորհուրդների նախագահների հաշվետվություն:

Ծնողական խորհրդի նախագահ Մարիամ Ազիզյանը խոսեց ծնողկոմիտեի, իսկ աշակերտական խորհրդի նախագահ Վարդան Ադամյանը՝ աշակերտական խորհրդի կատարած աշխատանքների մասին:

Որոշեցին

Ե՛վ ծնողական, և՛ աշակերտական խորհուրդների նախագահների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ ..... Մարիամ Ազիզյան

Քարտուղար՝ ..... Անի Դավթյան